Դատավորների և պետական իշխանության մարմինների համար համար հակախտրականության օրենսդրության կիրառման ընթացակարգերի բարելավման անհրաժեշտություն՝ ներառյալ ընթացակարգային ուղեցույցի ընդունման անհրաժեշտություն

Ինչն է պատճառը, որ ՀՀ դատարանները լիարժեք կերպով չեն կարողանում իրականացնել հակախտրական օրենսդրությունը.

- ՀՀ–ում օրենսդրական համակարգում բացակայում է խտրականության վերաբերյալ միասնական օրենքը:
- ՀՀ–ում շուրջ 41 օրենսդրական ակտեր անդրադարձ են կատարում խտրականությանը, առանց հաստակ ձևով սահմանելու թե ինչ է խտրականությունը:
- ՀՀ օրենսդրական դաշտում սահմանված չէ նաև կարծրատիպերի սահմանումը, սա նույնպես լրացուցիչ բարդություններ է առաջացնում արդյունավետ հակահակախտրական պայքար իրականացնելու համար:

- ՀՀ դատական օրենսգիրքը հստակ կերպով չի սահմանում տղամարդկանց և կանանց սեռային հարաբերակցությունը ՀՀ տարբեր ատյանների դատարաններում:

- Տղամարդկանց և կանանց իրավահավասարության վերաբերյալ ընդունվել է օրենք, բայց այն ամբողջական ծավալով չի կարգավորում հասրակական հարաբերությունները և կարիք ունի մի հետագա լրամշակման:

- Ընտանեկան բռնության մասին միասնական օրենք դեռևս չի ընդունվել, արդյունքում կանանց նկատմամբ կիրառվող բռնության դեպքում պետությունը հավուր պատշաճի պաշտպանություն չի կարողանում իրականացնել:

Որոնք են հակախտրական ուղենիշների ընդունման պատճառները.

- Որպեսզի դատարաններում ապահովվի արդար դատաքնության իրականցումը:
- Որպեսզի ՀՀ Կառավարությունը հնարավորություն ստանա պատշաճ կերպով իրականացնել իր կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները:
- Որպեսզի հասարակության բոլոր շերտերը հնարավորություն ստանան արդար դատաքննության հնարավորություն:

Եվրոպական Միության անդամ հանդիսացող պետություններում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց գործունեությունը իրականացնելիս կիրառում են հակախտրական չափորոշիչներ:

Ինչպիսի բովանդակություն պետք է ունենան հակախտրական ուղենիշները

- Հակախտրական օրենսդրության կիրառման համար անհրաժեշտ է որպեսզի պետական մարմինները հանրային քաղաքականություն մշակելու բոլոր փուլերում հաշվի առնի հակախտրական մեխանիզմների կիրառման անհրաժեշտությունը և բացառեն խտրականության դրսևորումները և ձեռնամուխ լինի հավասարության հաստատմանը:

- Հակախտրական պայքարի ուղենիշներ ունենալը իրենից ենթադրում է հավասարության վերաբերյալ դրույթներին՝ որոշում ընդունելու գործընթացում կենտրոնական դիրքում են գտնվում :
- Հակախտրական ուղենիշներ մշակելիս՝ հանրային քաղքականությանը վերաբերվող փաստաթղթեր նախագծելիս, իրականացնելիս, գնահատելիս և հանրային ազդեցությունը մշակելիս հակախտրական բաղադրիչը պետք է հաշվի առնել:

Զարգացած երկրներում ինչպես են մշակվում հակախտրական չափորոշիչները.

- Նախ և առաջ հստակեցվում են հակախտրական ուղենիշներով սահմանվող նպատակները:
- Դրանից հետո անդրադարձ է կատարվում հնարավոր արդյունքներին պարզելու համաև հնարավոր հակախտրական օրենսդրությունը կարող է ծառայել իր նախանշած գաղափարներին թե ոչ:
- 3-րդ փուլում քննության են ենթարկվում այն հնարավոր քայլերը, որոնք պետք է իրականացվեն հակախտրական ուղենիշները կիրառելիս

- 4-րդ փուլուն պարզվում է պետական այն մարմինների շրջանակը, ովքեր պատասխանատու են հակախտրական չափանիշների կիրառելիության համար:

- 5-րդ փուլում հստակեցվում է հնարավոր շահառուների խումբը, ում համար իրականացվում է հակախտրական ուղենիշների մշակումը:

- Իսկ վերջին փուլում ամփոփվում են հնարավոր արդյունքները:

Շնորհակալություն ուշադրության համար